

# Խոսքային և հաղորդակցման (կոմունիկատիվ) խնդիրներն աուտիզմի ժամանակ



Ինչպես արդեն նշվեց [Նախորդ նյութում](#), աուտիզմով երեխաների համար կյանքը հանդիսանում է սթրես, որի հետևանքով էլ նրանց մոտ ձևավորվում են մի շարք վարքային առանձնահատկություններ: Այդպիսին է հասարակության հետ վերբալ (խոսքային) հաղորդակցման դժվարությունները: Աուտիզմով երեխաների կեսից ավելիի մոտ առկա են խոսելու հմտության զարգացման և խոսքի ձևավորման

դժվարություններ: Մյուս մասն էլ կարողանում է խոսել, սակայն էական դժվարություններով, հաճախ դրսևորելով սպեցիֆիկ խնդիրներ, այդ թվում նաև էխոլալիա, որն ուրիշի կողմից ասված բառի, նախադասության կրկնողությունն է (երբեմն նույն շեշտադրությամբ): Բացի սա, նրանք կարող են ունենալ նաև այլ խոսքային դժվարություններ, ինչպիսիք են.

- Դերանունների սխալ կիրառումը: Կարող են «ես»-ի փոխարեն կիրառել «դու» դերանունը:
- Բառացի են հասկանում ասվածը: Կարող են չհասկանալ խոսքի մեջ թաքնված այլ միտքը, սարկազմը, հումորը:
- Երբեմն դժվարանում են մեր կողմից ասված խոսքն ընկալելիս: Անգամ այն դեպքում, երբ երեխան հասկանում է խոսքի կառուցվածքը և ունի մեծ բառապաշար, կարող է դժվարանալ խոսքը վերլուծելիս: Նման դեպքում հարկադրված ենք լինում ասվածը մի քանի անգամ կրկնել:

1) **Չարգացրեք երեխայի կարողությունները:** Երեխայի հաղորդակցման և խոսքային խնդիրների շտկման ճիշտ մոտեցումը կախված է երեխայի հնարավորություններից և աուտիկ սպեկտորի խանգարման դրսևորման

մակարդակից: Եթե երեխան ընդհանրապես չի կարողանում խոսել, ապա առաջին հերթին փորձեք սովորեցնել մատով ցույց տալ իրեն անհրաժեշտ առարկան: Իսկ եթե երեխան կարողանում է արտաբերել առանձին բառեր, ապա կարող եք սովորեցնել պարզ նախադասություններ:



- Պետք է հուսահատվել, եթե երեխան չկարողանա խոսել սովորել: Չխոսող աուտիզմով երեխաները ևս կարող են կյանքում իրենց տեղը գտնել և լինել երջանիկ: Ձեր երեխան կարող է սովորել հաղորդակցվել այլընտրանքային միջոցներով:

2) **Խոսքային հմտությունների զարգացման համար դիմեք լոգոպեդի:** Լոգոպեդը կարող է օգնել երեխային բարելավվել արտաբերումը, սովորել ճշգրտությամբ նախադասություններ կազմել, ինչպես նաև ավելի լավ հասկանալ և վերլուծել ասված խոսքը:



3) **Խոսեք երեխայի հետ:** Խոսեք անգամ այն դեպքում, երբ ձեզ թվում է, թե նա ուշադրություն չի դարձնում ձեր ասածին: Բացատրեք, թե ինչու<sup>՞</sup> և ինչպե՞ս են տեղի ունենում այս կամ այն իրադարձությունները, երևույթները, հատկապես եթե նա որևէ իրավիճակում բարկանում կամ լարվում է: (Օրինակ,

«Մենք գնում ենք խանութ, որպեսզի գնենք համեղ և օգտակար մթերք, որից համեղ ճաշեր ենք պատրաստելու»): Բարձրաձայն կարդացեք և երգեք: Փորձեք փոքրիկ բանաստեղծություններ սովորեցնել նրան:

4) **Պատմեք պատմություններ կամ հեքիաթներ:** Փորձեք ամեն օր հեքիաթ պատմել: Հատկապես երեկոյան, երբ նա արդեն հոգնած է և պատրաստ է պառկել ու լսել ձեր հեքիաթները: Խնդրեք, որպեսզի երեխան ինքը որևէ բան պատմի (անգամ այն դեպքում, երբ դուք ոչ միշտ եք

հասկանում են արտաբանությունները) :Անպակերտեղալիտառնալ ավելի ինքնավստահ և քիչ նյարդային:



- Այնպես արեք, որպեսզի երեխան չզգա, որ իր պատմությունն անհետություն է: Լսեք և գնահատեք հաղորդակցման ամեն մի փորձը (դա նրա համար այնքան էլ հեշտ չէ): Պատմությունը լավ հասկանալու համար ընթացքում կարող եք մեկ կամ երկու հարց տալ: Հիշեք, որ երբեմն չհուսահատեցնելու համար կարող եք ձևացնել, թե հասկացել եք պատմության ողջ իմաստը:

**5) Բառապաշարի հարստացման համար հաճախակի կրկնեք բառերը:** Այն բառերը, որոնք դուք ցանկանում եք երեխային սովորեցնել, կրկնեք մի քանի անգամ՝ հավելով կամ մատնացույց անելով այդ առարկան: «Սա քո մահճակալն է: Մահճակալ: Կրկնում ենք՝ «մահ-ճա-կալ» և ամեն անգամ անհրաժեշտ բառը կրկնելու դեպքում խրախուսեք երեխային: (Ցանկալի է նման դեպքում խոսել առաջին դեմքով,



հատկապես, երբ դեռ երեխան չի ճանաչում սեփական «ԵՍ»-ը: Այդպես երեխան ոչ թե կասի. «Սա քո մահճակալն է», այլ՝ «Սա իմ մահճակալն է»:)

**6) Եթե երեխան դժվարանում է իր ցանկություններն արտահայտել բառերով, ապա փորձեք հաղորդակցվել նկարների միջոցով:** Պատրաստեք

նկարներով քարտեր, որոնցում պատկերված են երեխայի հաղորդակցման համար անհրաժեշտ բոլոր առարկաները: Նկարներում կարող են լինել փոքրիկի համար նախընտրելի սնունդը, ըմպելիքը, մահճակալը, սիրելի գրքերը, խաղալիքները: Երեխան կարող է կիրառել



այդ նկարները՝ բացատրելով, թե ինչ է  
ցանկանում:

Պատրաստեց՝ Նարին Սուրադյանը  
(«TMM-Սովորեցրու ինձ ավելին- ուսուցման  
և զարգացման կենտրոն»-ի Էրզոթերապիստ)